Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

11.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-22-01-23
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան 07 **.08.2023թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Գևորգ Չամյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 10.04.2023թ.-ի թիվ 979-Ա հրամանով, և Կադաստրի կոմիտեն (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Մհեր Խաչատրյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 11.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-22-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 7 600 000 (յոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 11.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-22-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Պատվիրատու՝

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց պող. 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030815
ՀՎՀՀ՝ 02534328
Հեռ.՝ (060) 474-142

Կոմերցիոն տնօրեն՝

Գևորգ Չամյան----------
/ստորագրություն/

Գլխավոր քարտուղար՝

Մհեր Խաչատրյան----------
/ստորագրություն/